# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

---

« 16 » մարտի 2015թ.

***ՀԱՐԳԵԼԻ ՄԱՍՆԱԿԻՑ***
***(ըստ ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1 ծածկագրով մրցույթի շրջանակներում գրանցված կազմակերպությունների ցանկի)***

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված NՇՀԱՊՁԲ-11/1 շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանքները :

Սույն հրավերի ( ծանուցման) ծածկագիր է հանդիսանում « ՀՀՊԿԱ-ՇՀԱՊՁԲ-ՎԱ-15/03» :

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Կիևյան-8 հասցեով, N39 սենյակ, մինչև 2015թ. մարտի 26-ը, ժամը 15 : 00-ն : Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Կ.Սերոբյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում ըստ ստացման հերթականության` ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը :

Հայտերը պարունակող ծրարները կբացվեն ՀՀ պետական կառավարման ակադեմիայի շենքում, ք.Երևան, Կիևյան-8 հասցեով, N 39 սենյակում, 2015թ.-ի մարտի 26-ին , ժամը 15 :00-ին :

«ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտ ապրանքների մատակարարման տեխնիկական բնութագրերը և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանների անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N1 հավելվածում :

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված`

ա/ Գնման ընթացակարգի դիմում

բ/ Գնային առաջարկ : Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով :

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով :

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը :

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ :

«ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է paara-bugalteria@rambler.ru

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը «Գնումների մասին» օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է Պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը կամ տվյալները Պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը` մինչև կարգի 110-րդ կետի 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը, ընդ որում`

-նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով` հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

-նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցների Պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)` հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Առդիր` 13էջ :

*ՌԵԿՏՈՐ`* *Ա.ԱԼՈՅԱՆ*

*կատ.` Կ.Սերոբյան*
*հեռ.22-26-20*